

Ծ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ի Ր Դ Ի

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Ի Ր Դ Ի Ւ

23 ՓԵՏՐՈՒԻԱՐԻ ՃՆԴՀԱԽՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

/ ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ԱՏԵԽԱԴՊԻՐ ՎԱՀԷ ՔԷԹԼԻԻ ԿՈՂՄԷ /

ԳԵՐԱԶՆՈՐԸ ՍՐՅԱՎԱՆ ՀԱՅՐ,
ԱՐԺԱՆՎԱՆՈՐԸ ՏԷՐ ՀԱՅՐ,
ԴԻւանի մեծայարգ ատենապետ
Եւ սիրելի անդամներ.

ԱՀԱՅԱՍԻԿ այս Օր, անդամ մը եւս, Ծխական Խորհուրդս կը
ներկայանայ իր մէկ տարուան գործունէութեան եւ աշխատանքին
տեղեկագիրը ներկայացնելու Զեղի՝ պատուական անդամներուդ, եւ
պարզելու տարուայ մը անցուղարձերուն արդիւնքները :

ԴԻՒԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ. — Տարի մը առաջ, ԶԵՐ քուէներով
ընտրուած Խորհուրդս, առաջին նիստին կազմեց իր ԴԻՒԱՆԸ ՀԵ
ՄԵԼԵՎԱԼ ԿԵՐՊՈՎ,

ԱՏԵԽԱԴՊԵՏ	ԵՐՈՒԱՆԴԻ	ՇԻՇՄԱՆԵԱՆ
ՓՈԽ ԱՏԵԽԱԴՊԵՏ	ՆՈՒՊԱՐ	ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
ՓՈԽ ԱՏԵԽԱԴՊԵՏ	ԱՐԱՄ	ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ
ԱՏԵԽԱԴՊԻՐ	ԱԼՊԷՐ	ՄԱՐՏԻԿԵԱՆ
ՓՈԽ ԱՏԵԽԱԴՊԻՐ	ՀԱՄԲԱՐ	ԿԷԶՋՐԵԱՆ
ԳԱՆՁԱՊԱՀ	ՎԱՀԷ	ԱԼԹՈՒՆԵԱՆ
ՀԱՇՈՒԱԿԱԼ	ՀՐԱԶ	ԹՈՐԻԿԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ	ԵՐՈՒԱՐԴ	ԳԱՍՄԱՊԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ	ՄԻՍԱՔ	ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ

ՎԵՀԱՓԱՌԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ. — Ծխական Խորհուրդիս այս
շրջանին գուգաղիպեցաւ ամենանշանակելի եւ անմոռաց պատմական
այցելութիւնը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ
Վազգէն Ա.ի, որ եկաւ իր շնորհաբեր եւ Օրհնաբեր ներկայութեամբ
միմիթարելու հայաշատ գաղութս :

Վեհափառ Հայրապետին այս յոյժ պատմական այցելութեան
Օրերուն գաղութս ապրեցաւ անշախընթաց եռուցերի մէջ : Գանա
տայի, Քէպէքի եւ Մոնթը էալի պատկան իշխանութիւնները, գլխաւո-
րութեամբ ընդհանուր կառավարիչ Ռուլան Միջընըրի, լուսահոգի
վարչապետ Տանիկ ձոնսոնի եւ Քաղաքապետ մեծայարդ ժան Տըրա-
փոյի Վեհափառին ընծայուեցաւ արքայավայել ընդունելութիւն
եւ մենք անոնց կը պարտինք մեր ժողովուրդին մօտէն ծանօթ
ցումը Գանատայի ասպնջական ժողովուրդին :

Վեհափառ Կաթողիկոսի այցելութեան կը պարտինք նաեւ մեր ազնիւ ժողովուրդին առատաձեռն նուի բատութիւնները, որոնց շնորհիւ կարելի դարձաւ գնուած հողամասին պարտքը վճարել ամբողջութեամբ։ Վեհափառ Հայրապետի քաղաքս գտնուած Օրերուն տեղի ունեցած պաշտօնական այցելութիւններն ու Հաւաքոյթները բոլորն ալ, առանց բացառութեան, կազմակերպուած էին անթերի կերպով եւ որոնց համար նորհուրդիս անդամներն ու կարգ մը ազնիւ ազգայինները, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Վաշէ Եպիսկոպոս Յովսէփեանի, ցոյց տուած էին գերմարդկային ճիզ ու կորով։ Այդ պատմական այցելութեան Օրերուն քաղաքիս գրեթէ բոլոր թերթերը, հեռատեսիլի ու ձայնասփիւոի կայանները զՕրաշարժի ենթարկուած էին Վեհափառ Հայրապետի այցելութիւնը անմահացնելու համար։ Այս առթիւ պարտք կը զգանք մեր սրտանց ու խորին շնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց, որոնք իրենց գնահատելի մասնակցութեամբ կարելի դարձուցին այդ Օրերուն աննախընթաց եւ փայլուն յաջողութիւնները։

Բացառիկ հաճոյքով կ, արձանագրենք ստորեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ու իր շքախումբին քաղաքս տուած պատմական այցելութեան մանրամասնութիւնները հակիրճ կերպով։

1 Յունիս 1968 Շաբաթ յ. մ. Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի, Վրաստանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Կոմիտաս Եպս. Տէր Ստեփանեանի, ինչպէս նաեւ էջմիածին ամսագրի խմբագիր եւ ձեմարանի տեսուչ Տիկար Արթուն Հատիտեանի, ժամանեց Տորվալի Օդանաւակայանը, ու դիմաւորուեցաւ աննախընթաց շուրջով ու մեծարանքներով։ Օդանաւակայանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ մամլոյ հաւաքոյթ մասնակցութեամբ բազմաթիւ հայ թէ Օտար թերթերու աշխատակիցներուն։ Բազմահարիւր հաւատացեալ ներու ծափողջոյններուն ներքեւ Վեհափառ Օրհնեց աւանդական հացն ու աղօք Ոստիկանական շքերթով եւ բազմաթիւ ինքնաշարժներու հետեւութեամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդուեցաւ Անկլիքաններու Ս. Յովհաննէս Եկեղեցին եւ Հրաշափառով մուտք գործելէ ետք, Վեհափառ իր առաջին պատգամը Մոնթը Էալահա յութեան։

Նոյն երեկոյ ժամը 8-ին Քուին էլիգապէթ Պանդոկի Մարքէթ սրահին մէջ սարքուեցաւ ճաշկերոյթ, որուն ներկայ եղանքէպէթի վարչապետը, Մոնթը Էալիքան քաղաքապետը եւ բարձրաստիճան կը Ծնական ներկայացուցիչներ եւ աւելի քան չորս հարիւր ներկաներ։

2 Յունիս 1968 Կիրակի առաւօտ, ժամը 11-ին, Ս. Յովհաննէս Տաճարին մէջ մատուցուեցաւ Հայրապետական անմահ Ս. Պատարագ, որ մէկ ժամ տեւողութեամբ սփոռուեցաւ Ս. Պ. Ս. Հեռատեսիլի կայանէն, որուն շնորհիւ Գանատայի մէկ ծայրէն միւսը տեսանելի դարձաւ այս պատմական արարողութիւնը ։ Նոյն Օրը երեկոյեան ժամը 7-ին, Եկեղեցու շինութեան Համար գնուած հողամասին Օրհնութիւնը տեղի ունեցաւ եւ ժամը 9-ին, գոլէժ Պրեպէ Օֆի արդիական սրահին մէջ Երիտասարդական Փառատօնը։

3 Յունիս 1968 Երկուշաբթի առաւօտ, Վեհափառ Հայրապետը

իր շքախումբով եւ Ծխական Խորհուրդի ատենապետ Պր. Երուանդ
Շիշմանեանի գլխաւորութեամբ, անդամներ՝ ՊՊ. Արամ Կուտսուզեանի,
Խուզար Սուքիսեանի, Վահէ Ալթունեանի, Վահէ Քէթլիի, ինչպէս
նաև կարգադիր յանձնախումբէն ՊՊ. Քերովը է Պտուկեանի, Յակոբ
Քէսթէքեանի եւ Տոգթ. Արթօ Տէմիրճեանի, առաջնորդուեցաւ Մոնթ-
քէպի Քաղաքապետարանը, ուր դիմաւորուեցաւ մեծայարգ ժան Տը-
ռափոյի կողմէ բացառիկ մեծարանքներով :

Նոյն Օրը այցելութիւն ՄԱՐԴԸ եի իր ԱՇԽԱՐՀԸ ցուցահան-
դէսին նախ տեղի ունեցաւ մտերմիկ ընդունելութիւն մը Քրիս-
տոնէական Տաղաւարին մէջ եւ, ապա, ցերեկուայ ճաշկերոյթ Քէպէ-
քի Տաղաւարին մէջ, սարքուած Քէպէքի վարչապետ Տանիէլ ծոնսոնի
կողմէ : Այս բացառիկ ճաշկերոյթին մասնակցող Օտար բարձրաստի-
ճան եկեղեցականները եւ Հիւրերը կը գլխաւորէք Քէպէքի կրթա-
կան նախարարը մեծայարգ ժան Կի Գարտինալը :

Նոյն երեկոյ Քուին էլիգապէթի մէջ տեղի ունեցաւ Հա-
ւաքոյթ Եկեղեցւոյս բոլոր մարմիններուն, յանձնախումբներուն,
ինչպէս նաև Քոյր միութեանց վարչական անդամներուն մասնակ-
ցութեամբ :

4 Յունիս 1968 Երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը, ընկե-
րակ ցութեամբ Գերշ. Տ. Թորդոմ Արքեպս Մանուկեանի, Գերշ. Տ. Վաչէ
Եպս, Թովսէփեանի, Խորհուրդիս ատենապետ Պր. Երուանդ Շիշմանեանի,
փոխ ատենապետ Պր. Արամ Կուտսուզեանի, պատմական այցելութիւն
տուաւ Քէպէք քաղաքը եւ վարչապետ Տանիէլ ծոնսոնի, ինչպէս նաև
Գանատայի ընդհանուր կառավարիչ Ռոլան Միշը ընըրի եւ ներկայ ե-
ղաւ իրեն ի պատիւ տըրուած ճաշին: Նոյն երեկոյ վերադարձ Մոնթ-
քէալ եւ Վեհր առաջնորդուեցաւ դէպի Լորենշըն լեռնաշղթաներու
գեղատեսիլ մէկ վայրը մի քանի Օր հանգստանալու համար եւ եղաւ
Հիւրեր Գարիպեան ընտանի քին:

7 Յունիս 1968 Ուրբաթ յ.մ., ժամը 4.30ին, Վեհափառ
Հայրապետը իր շքախումբով եւ Օդի ճամբով հրաժեշտ առաւ եւ
մեկնեցաւ նիւ Եղիք, աւելի վերջ շարունակելու համար իր ու-
ղին դէպի Հարաւային Ամերիկայի հայաշատ գաղութները :

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԳԱԱՏԱՅԻ ԱՐԱՋ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ. — Այս տա-
րեցընի ընթացքին, Խորհուրդն ըարեքախտութիւնն ունեցաւ վա-
յելելու բարձը ներկայութիւնը Գանատայի Առաջնորդական Փոխա-
նորդին գերշ. Տ. Վաչէ Եպս, Թովսէփեանի, որ իր գրասենեակը Մոնթ-
քէալ համատած ըլլալով, միշտ գտնուեցաւ մեր կողքին, միշտ մե-
զի հետ, ըլլայ իր տեղին ցուցմունքներով եւ ըլլայ իր կորովի
գործունէութեամբ հանդիսացաւ մեր եկեղեցւոյ ամենազ Օրաւոր
դրօշակիրը : Հոս Հարավարակաւ պարտք կը համարենք մեր խորին շը-
նոր հակալութիւնները յայտնելու Սորին Սրբազնութեան, ի մաս-
նաւորի մեզ հանդէպ տածած իր ազնիւ զգացումներուն եւ ցացա-
բերած անվերապահ գուրգուրանքին համար :

ԱՐԺ. Տ. Մ. ՔՀՆՅ. ՊԻՊՈԵԱՆԻ. ԺԱՄԱՆՈՒՄԸ. — Այս շընին
կէսին, Առաջնորդարանի ուրոշումով ու կարգադրութեամբ, տեղի
ունեցաւ տեղափոխումը գաղութիւն առժամեայ հոգեւոր հովութ-
եան կոչուած Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Բագոյեանի, որ նոր կարգադր-

ըութեամբ պաշտօնի կը կոչուէր Շիքակոյի Ռւոքիկըն համայնքին։ Այս անգամ դարձեալ Հիւսիսային Ամերիկայի բարեխնամ Առաջնորդ Գեղշ. Տեղոգոմ Արժ. Մանուկեանի կարգադրութեամբ, գաղութիս առժամեայ Հովուութեան կը կոչուէր Արժ. Տ. Մամբրէ Քահանայ Պի պէռեան, խաչակի քահանան, որուն ներկայութեամբ գաղութիս Օժտըւեցաւ Երկարամեայ փորձառութեամբ թրծուած եկեղեցականով մը։ Տէր Հօր կողմէ շարդ կը շարունակուին հովուական պարտականութիւնները առանց խաւանումի։

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԽՇԱԽԱԿՈՒՄ. — Այս մէկ տարուայ շրջանին Խորհուրդիս կազմին մէջ տեղի ունեցան կարգ մը փոխսութիւններ։ Տարի մը առաջ կատարուած ընտրութիւններէն անմիջապէս ենթ իր հրաժարականը ներկայացուց խորհրդատու անդամներէն Պր. Միսաք Կուտսուզեան։ Նկատի ունենալով անոր հրաժարականին բանաւոր պատճառները, Խորհրդաւուեցաւ ընդունի զայն։ Ընդհանուր ժողովի ընտրութեանց ընթացքին քուէններու շարքով առաջին համեմատականի մնացող Պր. Վահէ Քէթլի իսկոյն հրաչիրուելով մաս կազմեց Խորհրդաւում։ Կարճ ժամանակի ընթացքին սակայն Խորհրդաւում պատճառները ներկրորդ հրաժարական մը ատենադրի պաշտօնը վարող Երիտասարդ ու յարաշարժ Պր. Ալպէր Մարտիկեանէ, որ գործով կը փոխադրուէր Գանատայի մէկ հեռաւոր քաղաքը։ Պր. Մարտիկեանի ակամայ հեռացումը իր այնուան սիրած ու պաշտան գաղութին խոր ցաւ պատճառեց բոլորիս։ Հոս պարտականութիւն կը նկատենք անգամ մը եւս մեր շնորհակալութիւնները յայտնելու մեր ժրաշան ընկերոջ իր թափած կարեւոր ճիգրուն եւ աշխատանքներուն համար։ Պր. Մարտիկեանի փոխարէն կանչուեցաւ Պր. Հայկ Միհաքեան, որ ընտրութեանց ատեն ներկրորդ պահնետն էր։ Այս պատճառաւ ատենադրութեան պաշտօնը յանձնուեցաւ Պր. Վահէ Քէթլի, որ կը վարէ իր այս պաշտօնը մինչեւ այս օր։ Այս շրջանին, գրասենեակի գործերուն աւելի զարկ տալու մտօք քարտուղարութեան պաշտօնին հրաւիրուեցաւ Տիկին Արաքսի Ազնաւուր, որ հերթաբար կը շարունակէ կը պաշտօնը, Օգտակար հանդիսանալով Խորհութիւնը։ Խորհրդիս ննջպէս ասկէ առաջ, այս շրջանին եւս իր Օգտակար մասնակցութիւնը բերաւ Պր. Գրիգոր Գրիգորուն, որուն ջանքերուն եւ ձեռնհասութեան շնորհիւ լոյս կը տեսնէ մեր բոլորին սիրած ու անհամբերութեամբ սպասած ԲՈՒՐԱՍՏԱՆը։ Հոս մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Տիկին Ազնաւուրի եւ Պր. Գըլճեասի։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈՎԻԼԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՍԵՆԵԱԿՆԵՐՈՒ ԶԱՐԴԱՐՈՒՄ. — Այս շրջանին, պողոտային վրայ նայող վերնայարկի սենեակը նորոգուելով եւ բարեփոխուելով, ու Գեղշ. Տ. Վահէ Եպս. Յովսէփեանի անձնական ջանքերով կահաւորուելով, տրամադրուեցաւ Միքաղան ՀՕՐ որպէս գրասենեակ Գանատայի Առաջնորդական Փոխանորոգութեան, որ կը գործածուի նաեւ Խորհրդիս ժողովներուն համար։ Վերնայարկի քովնտի սենեակը եւս նորոգուելով եւ կահաւորուելով, տրամադրուեցաւ Գանատայի Առաջնորդին որպէս աշխատանեակ։

ԲՈՒՐԱՍՏԱՆ. — Կարժէ մեր հրատարակութեան, ԲՈՒՐԱՍՏԱՆի մասին, շռայլել մի քանի տողեր։ ԲՈՒՐԱՍՏԱՆ, Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի այցելութեան առթիւ լոյս տեսաւ ներկու բացառիկ թիւերով, տպագրուած եւ նկարաներով գարզարուած, որոնք գնահատեցան բոլորէն, ինչպէս նաեւ նոյնինքն վեհափառ Հայրապետին

կողմէ : Տարուէ տաղի բազմացող այս գաղութին գոհացում տալու կոչուած մեր հրատարակութիւնը իր ճոխ բովանդակութեամբ այս Օր կը գրաւէ կարեւոր տեղ մը ուրիշ հրատարակութիւններու կողքին :

Հոս Մեր տեղեկատուութեան մէջ մի առ մի պիտի չթուենք
մեր մարմիններուն եւ յանձնախօսմբերուն գլուխ հանած գործու-
նէութիւններու քանի որ քիչ ետք իւրաքանչիւրը & եզ պիտի ներ -
կայացնէ իր տեղեկատուութիւնը :

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍ. - Միայն հոս տեղին կը գտնենք յի ~
շել Կոմիտաս Դպրաց Դասու բոլորանուէ ծառայութիւնները ի
պայծառութիւն մեր եկեղեցւոյ Դպրաց Դասու իւրաքանչիւր անդա-
մը, որ բերած է իր մասնակցութիւնը տասնեակ տարիներէ ի վեր,
գնահատանքի արժանի է ամէն բանէ աւելի ճարիներէ ի վեր իր
գործոն աշխատութիւնը բերող Դպրաց Դասու ղեկավարը, Պը. Յա -
րութիւն Մանասեան, իր անձնական պատճառներով Հրաժար. Եցաւ այս
պաշտօնէն ։ Ամենայն Հայոց Հայրապետին քաղաքս գտնուած Օրերուն
եւս Կոմիտաս Դպրաց դասը իր ամբողջական կազմով բերաւ իր մատ-
նակցութիւնը մատուցուած անմահ ու անմոռաց Ս. Պատարագին, որուն
ղեկավարի պաշտօնը յանձնուած էր այդ Օրերուն դեռ նոր ժամանած
Պը. Գեղամ. Նիրվանեանի, որ ւն եւս կը յայտնենք մեր շնորհակա -
լութիւնները Պը. Մանասեանի Հրաժարումէն ետք, նորհուրդս յարմար
նկատեց Կոմիտաս Դպրաց Երգչախումբը պատրաստելու պաշտօնը յանձ-
նել բազմահմուտ Տիկին Սարգորիտ Զավգավաթճեանի, որուն անշահա -
խընդիր մասնակցութեամբ կարելի պիտի դառնայ կարճ ժամանակի մէջ
ունենալ որակաւոր երկսեռ քառածան յն երգչախումբ մը, որ պիտի գայ
լրացնել շատ կաշեւոր պակաս մը ։ Այս առթիւ մեր խորին շնորհա -
կալութիւնները կը յայտնենք Տիկին Զավգավաթճեանի, որ Հակառակ
իր բազմազբաղ վիճակին, ընդառաջնելով նորհուրդս հրաւերին, կը
մարզէ ու կը ղեկավարէ Կոմիտաս Դպրաց Երգչախումբը :

ՄԱՐԱԹՅՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Այս շըջանին վարժարանին մէջ
տեղի ունեցան կարգ մը փոփխութիւններ և նախապէս, Կիրակն Օրեայի
եւ Հայ Լեզուի դաշնթացքները թէեւ նոյն Օրը տեղի կունենա-
յին, սակայն բաժնուած էին անջատ աշխատութեան վարչաձեւով :
Այս տարե շըջանին երկու մասերը իրարու միացուեցան նոյն խը-
նամակալութեան ներքեւ և նորու հուզիս որոշումով վարժարանը ու-
նեցաւ տնօրէն մը յանձին ՊԲ. նուպար Սամուրեանի, որուն մաս-
նակ ցութեամբ եւս վարժարանը կարգադրէ նոր նուաճումներ :

ԹԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԹ. — Այս շըջանին, առաջին անգամ ըլլակով, Ծխական Խորհուրդիս որոշմամբ կազմակերպության յարգանքի երկու հաջաքոյթներ, մին Խոհերությած Տիկին Լիւսի Քէսսթէքեանի, իսկ Միւսը Պր. Յարութիւն Սանսանանի : Առաջինը որպէս մազմահը-մուտ կըթական Մշակ, որ ծառայած էր գաղութիս Կիրակնօրեայ վարժարանին վեռելքին, իսկ երկրորդը որպէս անխոնչ վարիչը Կոմիտաս Դպրաց Դպահին և Սեր յարգարժան բարեկամները, երկարամեայ ծառայութենէ յետոյ Ներկայացուցած էին իրենց Հրաժարականները : Այս բացառիկ երեկոյթներուն կազմակերպութիւնները յանձնուած էին Սամիկոնեան Մշակութային Միութեան եւ Հ. Ե. Կազմակերպութեան, որոնք գեղարդէստական ճոխ յայտագիրներով գնահատելի աշխատանք կատարեցին :

ԽՈՐՀՈԴԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ - Այս շրջանին
տեղի ունեցած երկու խորհրդակցական ժողովներ մասնակցութեամբ
բոլոր մարմիններու եւ յանձնախումբերու եւ տրուեցան կարեւոր
որոշումներ յառաջիկայ գործունքութեանց առնչութեամբ : Տեղի
ունեցան նաեւ անդամական երկու ժողովներ, մին բոլորովին տը -
րամադրուած եկեղեցւոյ շինութեան իսկ միւսը որպէս նախապատ -
րաստական ժողով :

Թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցած էր
նիւ Եռոքի մէջ նախագագութեամբ Ամենայն Հայոց Վեհափառին,
գաղութիս կողմէ պաշտօնապէս ներկայ գտնուած էին ՊՊ. Յակոբ
Քէսթէքեան եւ Երուանդ Շիշմանեան, ինչպէս նաեւ ծանօթ անձնա -
ւորութիւններէ խումբ մը ներկայ եղաւ Մայր Տաճարի մէջ մա -
տուցուած երկրորդ Ս. Պատարագի արարողութեան :

Առաջնորդարանի Մայր Տաճարի Օծման բացառիկ հանդիսու -
թեան, գաղութիս համար եւս տրամադրուած էին երկու հրաւիրա -
տոմսեր : Խորհութիս յարմար գատեց այդ հրաւիրատոմսերը տրամա -
դրել եկեղեցւոյս տեւական Օրէն ծառայող Հաճի Մայրիկ նազար -
եանի եւ Երիտասարդացի այդ Օրերու ատենապետ Պր. Ալէքս Գուն -
թէրեանի, որոնք ներկայ գտնուեցան Օծման աննախրնթաց արարողու -
թիւններուն :

Քէպէքի վարչապետ Տանի Էլ Ճոնսոնի անակնկալ մահը խոր
ցաւ եւ վիշտ պատճառեց գաղութիս եւ ի մասնաւորի Խորհութիս
անդամներուն: Դեռ կարճ շրջան մը առաջ, Ամենայն Հայոց Հայրա -
պետի քաղաքս տուած շնորհաբեր այցելութեան Օրերուն, մեծայարդ
վարչապետին ցոյց տուած անկեղծ վերաբերմունքը եւ մօտիկ հե -
տաքրքրութիւնը հանդէպ վազգէն Ա. Կաթողիկոսին, մեր սրտերուն
եւ Հոգիներուն մէջ հազիւ տեղաւորուած, իր մահուան գոյժը
վիշտով լեցուց մեր բոլորին մի րտերը եւ Քէպէքի մէջ տեղի ու -
նեցած յուղարկաւորական արարողութեանց ներկայ գտնուեցաւ
Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Վաչէ Եպս. Յովսէփեան
իսկ քաղաքիս մէջ կազմակերպուած յարգանքի արտայայտութեան,
գլխաւորութեամբ Սրբազն Հօր եւ մասնակցութեամբ Արժ. Տ. Ս.
քահանայ Պիպէռեանի եւ Ծխական Խորհութիս անդամներուն, պատ -
ւիրակութիւն մը ներկայ գտնուեցաւ :

Գաղութիս տարուէ տարի աճող ու բազմացող թիւր կը դըժ -
ւարացնէ հասցէներու հարցը: Նկատի ունենալով այս պարագան,
այս շրջանին մասնաւոր աշխատանք տարուեցաւ հասցէները պատ -
րաստելու եւ կանոնաւորելու համար: Հոս Հաճոյքով կը նախք բաել
թէ դժուարին ու կնճուտ այդ հարցը գլուխ հանուեցաւ գրեթէ
կատարեալ կերպով եւ նոյնիսկ գոտիներու նոր թիւրով :

Այս տարեշրջանին, քաղաքապետարանի կողմէ եկեղեցւոյս
շինութեան համար գնուած հողամասին 1000 տոլարի տուրք մը
սահմանուած էր: Խորհութիս շանքերուն շնորհիւ այս տուրքը
շնչուեցաւ գոհունակութիւն պատճառելով բոլորին :

Ծխական Խորհութիս այս շրջանին կազմակերպեց դաշտա -
գընացութիւն մը Ս. Աստուածածնայ տօնին զուգագիպող 13 Օգոս -
տոսի Կիրակի Օրը, ինչպէս նաեւ ճաշապար մը անցնող տարուայ

Նոյեմբեր 2-ին, գերմանական ակումբին մէջ :

Մեր այս մէկ տարօւան գործունէութեան շրջանին իրենց կարեւոր մասնակցութիւնը քերին մեր երկու քոյր կազմակեր — պուլթիւնսերը թէքիեան Մշակութային Սիութիւնը եւ Հ.Բ.Ը.Ի. Հովանաւորութիւնը վայելող Հ.Մ.Ը.Սիութիւնը, որոնք իրենց ամբողջական կազմերով, նիւթական ու բարոյական միջոցներով, իրենց ռատիոժամով, ինչպէս նաև զանազան հանդէս-հաւաքոյթներով, սատարեցին մեր եկեղեցւոյ պայծառութեան չոս, այս առթիւ, պարտինք մեր խորագգաց շնորհակալութիւնները յայտնել թէքիեանի, Հ.Մ.Ը.Սիութեան, ինչպէս նաև Հ.Բ.Ը.Սիութեան Սոնթրէալի մասնա ճիւղի վարչութեանց յարգարժան անդամներուն, մաղթելով նորա նոր յաջողութիւններ իրենց յառաջիկայ ազգօգուտ գործունէութիւններուն:

Ծխական նորհութեամբ, ըլլայ իր կազմին եւ ըլլայ իր անդամներուն ու մարմիններու միջեւ: նորհութեամբ քաջ կ, ըմբռնէ, թէ առանց համայնքի աջակցութեան ու կարեւոք ոյժերու համախմբման եւ անոնց մասնակցութեան ու քաջալերութեան, որեւէ Ծընական նորհութեամբ չի կարողանար ականաւոր արդիւնքի յանդիլ, մենք վստահ ենք ու հաւատացած ալ, որ մեր ազնիւ համայնքը, յառաջիկայ կարեւոր ձեռնարկներուն, ձեռք ձեռք տուած, մէկ սիրտ եւ մէկ հոգի դարձած, էամօքն Աստուծոյ, պիտի կանգնէ իր սեփական տաճարը եւ սրահները, որոնց ամուր կամարներուն ներքեւ պլացող Լուսաւորչի կանթեղի լոյսէն ներշնչուած, պիտի կարողանայ աւելի զարկ տալ հայպահպանման դժուարին աշխատութեանց հիւրընկալ եւ ազատ այս երկրին մէջ :

Այս Օր նորհութեամբ կազմէն, ըստ կանոնագրութեան, կը դադրին ՊՊ. Համբարձում կէ Օչէրեան: Հայկ Միսաքեան, Հրաչ Թորիկեան եւ Վահէ Թէթլի, ինչպէս նաև կը հրաժարի ամենագործ Օն եւ Օգտակար անդամներէն Պղ. Արամ Կուտսուզեան իր առողջական պատճառով Այս առթիւ կ, արժէ ձեզ պատուական անդամներուն ներկայութեան մեր խորին շնորհակալութիւնները յայտնել մեր սիրելի պաշտօնակից Պղ. Արամ Կուտսուզեանի մատուցած անդին ծառայութիւններուն փոխարէն: մաղթելով իրեն արագ ապաքինում ու կրկին վերադարձ իր այնքան սիրած համայնքի գործերուն:

Միրելի անդամներ, հոս վերջ կուտանք նորհութեամբ բոլորած այս մէկ տարուան նստաշրջանի գործունէութեանց եւ աշխատութեանց բարոյական տեղեկատուութեան ողջունելով ձեզ բոլորդ, յարգարժան անդամներ, մաղթելով իւրաքանչիւրիդ արդիւնաբեր ու բեղնաւոր տարի մը :

ԾԽԱԿԱՆ ՆՈՐՀՈՒԹԵԱՆ
ԱՏԽԱԴՐՈՒՐ

ՎԱՀԷ ԹԷԹԼԻ

ԾԽԱԿԱՆ ՆՈՐՀՈՒԹԵԱՆ
ԱՏԽԱԴՐՈՒՐ

ԵՐՈՒԱՆԴ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Ծ.Ն. Զանազան այլ մարմրնեցու տէղեկատուութիւնները պիտի տանք մեր յաջորդ թիւով :

ԱՆԴԱՄԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԺՈՂՈՎ ԵՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

— 0 —

Ծխական տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 23 փետրուարին, Կիրակի կ. վ. ժամը 4-ին ՀԱՅ ՏՈՒՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷջ և նախագահութեամբ Գանատայի Առաջնորդական Փոխանորդ ԳԵՐՀ. Տ. Վաչէ Եպս Յովսէփեանի որ իր քով ունէր գաղութիս Հոգեւոր Հովիւր: Արժ. Տ. Մամբրէ Քահանայ Պիպէռեանը:

Ժողովը սկսաւ Սրբազան ՀՕՐ աղօթքով եւ, ապա, ձեռնար կը ւեցաւ դիւանի ընտրութեան Սիածայնութեանբ դիւանի ատենապետ ընդրուեցաւ Տոքթ. Յակոբ Գարակէ Օգեան, իսկ քարտուղարութեան ՊՊ. Սիսաք Կուտսուզեան եւ Սարգիս Տողրամաճեան:

Դիւանի կողմէ կարգաւ ընթացք տրուեցաւ Օրակարգի գործադրութեան: Գաղութիս Հոգեւոր Հովիւր արժանաշնորհ Տ. Մամբրէ քհնյ. Պիպէռեան կարգաց իր տեղեկատուութիւնը տալով հակիրճ մանրամասնութիւններ իր գործունեցեան շուրջ:

Աւելի ետք Ծխական Խորհուրդի դարեկան տեղեկատութիւնը կարգաց ատենապիր ՊՐ. Վահէ Քէթլի /ԾԽ. ԱՅԴ տեղեկատուութիւնը ամբողջութեամբ կուտանք առանձինն/ Խորհուրդութիւն թողլով ներկաներուն վրայ եւ արժանանալով բոլորին գնահատանքին եւ միաձայն վաւերացուցին: Ծխական Խորհուրդի ենթակայ մարմինները ներկայացուցին, իրենց տեղեկատուութիւնները կարգաւ: Տիկին Ալիս Մելքոնեան կարգաց Տիկնանց Օժանդակինը, ՊՐ. Ժիրայր Նըշանեան կոմիտաս Դիպրաց Դասինը, Կարօ Շամլեան, Եկեղեցաշինութեան յանձնախումբինը: Սարգիս Տողրամաճեան Հ. Ե. Կ. ին եւ նաեւ Արա Կէտիքեան հաշուեկշիքի մասը, Կարօ Շամլեան Մամի կոնեան Մշակութայինը: Բոլորն ալ խանդավառեցին անդամները եւ արժանացան անոնց գնահատանքին Յասնաւոր յիշատակութեան արժանի է: Դպրաց Դասինը, պատրաստուած ատենապետ ՊՐ. Ժիրայր Նըշանեանի կողմէ:

Ապա հանդէս եկաւ Ծխականի գանձապահը, ՊՐ. Վահէ Ալթունեան, որ նախապէս տպուած եւ բաժխուած զանազան հաշիւներու շուրջ բացատրութիւններ տուաւ: Հաշուեքնոնիչ մարմնի տեղեկագիրը կարգաց ՊՐ. Անդրանիկ Զատրճեան եւ գոհունակութեամբ ու գնահատանքով արտայայտուեցաւ ՊՐ. Ալթունեանի կատարած բծախընդիր աշխատանքին շուրջ: Տոքթ. Արշաւիր Կէ Օնճեան կարգաց Ընտրուղյական Յանձնախումբի տեղեկատուութիւնը, որմէ ետք ձեռնար կուեցաւ Ծխականի պաշտօնէ ղադարեալ անդամներու փոխարէն նորերու ընտրութեանը: Ընտրուեցան ՊՊ. Հայկ Միսաքեան, Յակոբ Թագուրեան, Գէորգ Ճանքուլ, Միսաք Կուտսուզեան եւ Վահէ Քէթլի: Եկեղեցաշինութեան Յանձնախումբին անդամ ընտրուեցան ՊՊ. Յակոբ Քէսթէքեան, Աշոտ Գարիպեան, Հայկ Շիրոյեան և Երկայ անդամները լսելէ վերջ ԳԵՐՀ. Տ. Վաչէ Եպս Յովսէփեանի փակման խօսքերը եւ պահպանիչը խոր գոհունակութեամբ մեկնեցան սրահէն: